

Արձանագրություն թիվ 8

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2023թ մարտի 28-ին

Օրակարգը՝

1. Ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ Ս. Վ. Ղոչիկյան - Հարգելի գործընկերներ՝ այսօրվա օրակարգի հետ ծանոթ եք բոլորդ: Օրակարգում ունենք փոփոխություն

2, կետ// Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում հարցը՝ այսօրվա նիստից հանվում է, քանի որ ծրագրերում կատարվում են հիմնարար փոփոխություններ՝ որոնք ունեն լուրջ քննարկումների կարիք:

Օրակարգը՝ փոփոխված տարբերակով, անցավ միաձայն:

Ս. Վ. Ղոչիկյան- սկսենք ընթացիկ հարցերից

1, Մենդի անվտանգություն բաժնի մագիստրոսական ծրագրի 1-ին կուրսի ուսանողների վատ հաճախումները ինչով են բացատրվում: Դասերին ներկա են լինում առավելագույնը 3 ուսանող: Երկուշաբթի 1-ին դասին ներկա է եղել միայն մեկ ուսանող: Վերջին ժամերին նա նույնպես չի ներկայացել:

Մագիստրոսական ծրագրի ղեկավար Ա. Ի. Մարտիրյան, - Վատ հաճախումները բացատրվում են աշխատանքով: Միշտ չեն կարողանում թույլտվություն ստանալ աշխատանքից բացակայելու համար: ԵՊՀ-ի կանոնակարգում գրված է, որ մագիստրոսը կարող է աշխատել, հետևաբար չենք կարող նրանց արգելել աշխատել:

Տ. Վ. Ղոչիկյան- Հարցը ուղղում եմ Ա. Ս. Գալստյանին- Մագիստրոսների դասացուցակը կազմելիս հաշվի չեք առել այն փաստը, որ նրանք աշխատում են:

Փոխդեկան Ա. Ս. Գալստյան- Դասացուցակի կազման ժամանակ մագիստրոսների հետ հարմարեցրել ենք այնպես, որ մաքսիմալ շահավետ լինի իրենց համար՝ ունենան ազատ օրեր և կարողանան նորմալ մասնակցել դասերին և հնարավորինս քիչ բացակայել աշխատանքից:

Դեկան Տ. Վ. Ղոչիկյանը Ա. Ի. Մարտիրյանին հանձնարարեց զբաղվել այդ հարցով:

Փոխդեկան Ա. Ս. Գալստյանը ներկայացրեց 2023/2024 ուս. տարում առաջարկված նորություններին:

Ա. Ս. Գալստյան- 2023/2024 ուս. տարում քիմիայի ֆակուլտետին տրամադրվել է 18 անվճար տեղ՝ 12 քիմիա բաժնին և 4 սննդի անվտանգություն բաժնին: Մյուս ուսումնական տարուց վերականգնվում է անվճար ընդունվող տղաների պարտադիր զինվորական ծառայության տարեկետման հարցը: Սա ռազմավարական տակտիկա է և վերաբերվում է միայն «Քիմիա» ֆակուլտետի, «Քիմիա» բաժնի ուսանողներին:

Ընթացիկ հարցերի վերջին կետը հետևյալն է: Բոլորը գիտեք, որ ֆակուլտետի գովազդով, կամ նորություններով զբաղվող աշխատակիցը գտնվում է ֆիզ. արձակուրդում՝ հետևաբար այդ աշխատանքով զբաղվող չկա: Ա. Ի. Մարտիրյան ֆակուլտետի փիառով զբաղվելու համար Ձեր ամբիոնից ընտրեք որևէ աշխատակցի:

2, Հարցը որը պետք է քննարկվի դա e-learning հարթակում ծրագրերի տեղադրման հարցն է:

Տ. Վ. Ղոչիկյանը դիմեց ամբիոնի վարիչներին: Նա նշեց, որ վարիչները պետք է ավելի խիստ մոտենան այդ հարցին: Անհրաժեշտության դեպքում տվյալ դասախոսի ներկայությամբ մտնել նրա կայքը և ֆիքսել կայքի լրացվածության աստիճանը:

Տ. Վ. Ղոչիկյան – Այժմ անցնենք մեր օրակարգի հիմնական հարցերին

1, Ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն. Ա. Դուրգարյան- Մեր ամբիոնում աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Շատերի մոտ հիմնական փորձարարական մասը ավարտված է: Չհաճախոխ ուսանողներ չունենք:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Շ. Ա. Մարգարյան – Մեր ամբիոնում աշխատանքները նույնպես նորմալ է: 4ուսանող արդեն անցել են ավարտական աշխատանքների ձևակերպման փուլին:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա. Ի. Մարտիրոսյան – Ավարտական աշխատանքները ընթանում են նորմալ: Շատերը անցել են աշխատանքների ձևակերպման փուլին:

Նիստի նախագահ, պրոֆեսոր

Նիստի քարտուղար, դոցենտ

Տ. Վ. Ղոչիկյան

Մ. Ա. Սամվելյան